EVOCABANK-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1 **Կազմակերպիչ կամ Բանկ**՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ

1.2 **Խաղարկություն**՝ գովազդային վիճակախաղ, որտեղ պատահականության սկզբունքով ընտրվելու են շահող մասնակիցներ

1.3 **Մրցանակ**՝ այն շահումը, որը տրամադրվելու է մասնակցին

1.4 **Մասնակից**՝ այն հաճախորդը, ով բավարարում է սույն պայմաններով սահմանված բոլոր պայմաններին

1.5 **Կանոններ**՝ Բանկի կողմից նշված պայմաններ

1.6 **Անկանխիկ վճարում** վճարային քարտի միջոցով անկանխիկ եղանակով կատարված վճարում

1.7 **Ժամկետ՝** 01.04.2025 (Երևանի ժամանակով ժամը 00:00-ից) մինչև 31.08.2025թթ (Երևանի ժամանակով ժամը 23:59-ը) ընկած ժամանակահատված

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Խաղարկությունը կազմակերպվում է «Էվոկաբանկ» ՓԲԸ – ի (այսուհետ՝ Բանկ կամ կազմակերպություն) կողմից:

2.2 Խաղարկությանը մասնակցելու դեպքում մասնակիցը ընդունում է սույն պայմանները և կանոնները:

3. Խաղարկության պայմաններ

3.1. Այն հաճախորդները, ովքեր Ժամկետի ընացքում կկատարեն 1մլն. ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի անկանխիկ վճարում Բանկի կողմից թողարկված Mastercard քարտերով, կմասնակցեն խաղարկությանը, որտեղ գլխավոր մրցանակը կլինի IM LS6 RWD (2024թ., սև մետալիկ, VIN CODE LSJWR4099RS049865) մակնիշի ավտոմեքենան: Կլինեն նաև հետևյալ մրցանակները՝

- Iphone 16 Pro Max՝ 5 հատ
- AirPods Max՝ 5 հատ
- Mastercard Digital Gift Card 50,000 ՀՀ դրամի՝ 10 հատ

4. Խաղարկությանը մասնակցելու պայմաններ

4.1 Խաղարկությանը մասնակցելու համար, անհրաժեշտ է Ժամկետի ընթացքում կատարել 1 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի անկանխիկ վճարում:

4.2 Անկանխիկ վճարում են համարվում անկանխիկ բոլոր գնումները՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- Կոմունալ վճարումներ
- Քարտից քարտ փոխանցումներ
- Սեփական հաշիվների միջև փոխանցումներ
- Խաղային վճարումներ, այդ թվում օնլայն կազինոներ (բեթթինգ/գեմբլինգ)
- Համալրում էլեկտրոնային դրամապանակներին
- Փոխանցումներ ՀՀ պետական բյուջե
- SWIFT փոխանցումներ
- Փոխանցումներ դեպի էլեկտրոնային փողի համակարգեր (Yandex Money, emoney, Upay և այլն)
- Վարկերի վճարումներ, ավանդի համալրում, ֆինանսական այլ գործառույթների իրականացում:

5. Մրցանակներ

5.1 Մրցանակները կհայտարարվեն հաջորդաբար՝

- Առաջին հերթին կխաղարկվի սույն Պայմաններով նշված ավտոմեքենան, հետո
- 5 հատ Iphone 16 pro max և 5 հատ Airpods Max-ի հաղթողները, և
- վերջում կհայտարարվեն՝ 10 հատ 50,000 ՀՀ դրամի Digital Gift Card-երի հաղթողները:

6. Խաղարկություն

6.1. Խաղարկությունը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 18-ին, ժամը 19:00

6.2. Հաղթողները որոշվելու են պատահականության սկզբունքով

6.3. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերում Բանկի Facebook-յան պաշտոնական էջում, իսկ խաղարկության տեսաձայնագրությունը տեղադրվելու է Բանկի պաշտոնական Youtube-յան ալիքում:

6.4. Ժամկետի ընթացքում 1 մլն. ՀՀ դրամ և ավել անկանխիկ գնում կատարած քարտերը խաղարկությանը մասնակցելու են քարտերի վերջին 6 թվի միջոցով:

6.5. Ուղիղ եթերի ժամանակ հայտարարվելու են Հաղթող մասնակցի քարտերի վերջին 6 թիվը:

6.6. Բանկը 72 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ փորձելու է կապ հաստատել հաղթող Մասնակցի հետ Բանկում Մասնակցի կողմից տրամադրած և ՀԾ Ավտոմատացված Բանկային Համակարգի (ՀԾ ԱԲՀ) Հաճախորդի թղթապանակում կցված հեռախոսահամարով:

6.7. Հաղթող մասնակիցը պարտավորվում է մրցանակը ստանալ 30 օրացույցային օրվա ընթացքում:

6.8. Այն դեպքերում, երբ Մասնակցի հետ կապի հաստատումը 72 ժամվա ընթացքում անհնար է կամ հաղթող Մասնակիցը 30 օրացույցային օրվա ընթացքում չի մոտենում մրցանակը ստանալու համար, տվյալ մրցանակի խաղարկությունը համարվում է չեղարկված:

7. Լրացուցիչ դրույթներ

7.1. Խաղարկության ժամանակ քարտը պետք է լինի գործող: Այն քարտերը, որոնց գործողությունը ավարտվում է մինչև Խաղարկության անցկացումը, պետք է լինեն վերաթողարկված:

7.2. Ժամկետի ընթացքում բացված քարտերը նույնպես կարող են մասնակցել խաղարկությանը:

7.3. Ամեն քարտ դիտարկվում է առանձին, իսկ հաճախորդի բոլոր քարտերով կատարված գործարքները չեն գումարվում իրար:

7.4. Կից քարտերը համարվում են առանձին քարտեր:

7.5. Մրցանակները տրամադրվելու են անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

7.6. Հաղթող Մասնակիցը նոտարով հաստատված լիազորագրով կարող է լիազորել այլ անձի իր անունից ստանալ մրցանակը:

7.7. Մրցանակները դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրամադրվում:

7.8. Հաղթող մասնակիցը, սույն պայմաններին և կանոններին համապատասխան, տալիս է իր համաձայնությունը լուսանկարահանվելու՝ Բանկի սոցիալական հարթակների էջերում հրապարակման համար: